Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-Հ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 23. Հատուկ (մասնագիտացված) խնամք |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Ալլա Հարությունյան<br>Ծրագրի ղեկավար/համակարգող |

Digitally signed by MKHITARYAN YERVAND 2508730335
Date: 2024.07.08 14:20:02 AMST

## 2. Ընվանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**:

Հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված են հետևյալ գործողությունները.

- Կարիքների գնահատում,
- Շահառուի սոցիալական վերականգնման անհատական ծրագրի կազմում,
- Կենցաղային սպասարկման ծառայությունների տրամադրում,
- Շահառուների սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանում և զարգացում,
- Կերակրի պատրաստման, կերակրման կամ բարեգործական ճաշարանի կերակրի տուն բերման ծառայությունների տրամադրում՝ ըստ ռեսուրսի,
- Շահառուին ուղեկցում անհրաժեշտ վայրեր, բժշկական հաստատություններ,
- Շահառուի անձնական հիգիենայի պահպանման հետ կապված ծառայությունների տրամադրում,
- Աշխատանքային թերապիայի, արտթերապիայի կազմակերպում,
- Անհատական հոգեբանական օգնության տրամադրում,
- Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում շահառուին,
- Սոցիալ-հոգեբանական խորհրդատվական օգնություն ցուցաբերում ընտանիքին,
- Հոգեբույժի պարբերական հսկողության և խորհրդատվության տրամադրում,
- Շահառուի դեղերի ստացում և տրամադրում շահառուին՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղերի ճիշտ և ժամանակին ընդունման մշտադիտարկում,
- Բարդ դեպքերի քննարկում, հաջորդ ամսվա աշխատանքների պլանավորում,
- Փորձի փոխանակման հանդիպումների կազակերպում,
- Միջոցառումների իրականացում՝ ուղղված անձանց սոցիալական ներառմանը, համայնքայինկյանքին մասնակցությանը,
- Իրավաբանական աջակցության տրամադրում, իրավունքի ոտնահարման դեպքերի բացահայտում և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- Թիմային քննարկումներ,
- Դասընթացներ մասնագետների համար,
- Սուպերվիզիոն ծառայություն:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործողությունները, տրամադրված ծառայությունները հիմնվել են շահառուների կարիքների վրա, որոնք մասնագետների կողմից գնահատվել են և ներկայացվել են անհատական ծրագրերում *(անհատական ծրագրերի թիվը՝ 18):*

Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին կենցաղային սպասարկում է տրամադրվել *(46 շահառու),* ճաշարանից կերակուր է տրամադրվել *(3 շահառու),* կերակրի պատրաստման *(9 շահառու)* հարցերում աջակցություն՝ սոցիալական սպասարկողների կողմից: Անձնական հիգիենայի պահպանման հարցերում տրամադրվող աջակցությունը ենթադրել է մարմնի մասնակի լվացման, խոնավ մաքրման, լոգանքի, ինքնախնամքի հարցերում աջակցություն, բնակարանի մաքրում, սպասքի, հագուստի լվացում և անկողնու հարդարում:

Շահառուներից 46-ը բժշկական աջակցություն են ստացել, որը հիմնականում ներառել է զարկերակային ճնշման չափում, գլյուկոմետրիա, դեղորայքային խորհրդատվություն, դեղորայքի

ստացման հարցում աջակցություն, միջմկանային ներարկումներ, առկա առողջապահական խնդիրների քննարկում և խորհրդատվություն:
Դեղորայքի մշտադիտարկումը ներառել է դեղորայքի պիտանելիության ժամկետների ստուգում, հոգեմետ դեղորայքի ընդունման ժամկետների վերահսկում, ինչպես նաև դեղորայքի վերաբերյալ խորհրդատվությունը,
Շահառուները *(9 շահառու)* բուժքույրերի կողմից ուղեկցվել են բժշկական հաստատություններ, իսկ դեղորայքի ստացում և տրամադրում իրականացվել է 20 շահառուների համար:

Իրականացվել է նաև սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանման հարցերում աջակցություն՝ սոցիալական աշխատողի, բուժքրոջ, հոգեբանի կողմից: Աջակցությունը ներառել է անհատական խորհրդատվություններ՝ նախասիրությունների, զբաղվածության կարիքների վերանայում և առաջնահերթությունների սահմանում, կենցաղավարման հարցերում ինքնավարության խթանում, առողջապահական որոշ իրավունքներից (օրինակ՝ պոլիկլինիկայի կողմից տրամադրվող ծառայություններ) օգտվելու վերաբերյալ գիտելիքների և հմտությունների զարգացում:
Սոցիալական աշխատողների կողմից տրամադրված ծառայությունները ներառել են նաև աջակցություն առօրյան կազմակերպելու հարցում, աջակցության տրամադրում անկանխիկ եղանակով ինքնուրույն գործարքների իրականացման հարցում, կազմակերպվել է որոշ շահառուների համար աջակցող սարքերի տրամադրման գործընթացը (արդյունքում շահառուն ստացել է անվասայլակ, լոգարանի աթոռ), որոշ շահառուներ ներգրավվել են մշակութային միջոցառումներում և տարբեր խմբակներում, ինչպես նաև ակտիվ աշխատանքներ են իրականացվել համայնքային կառույցների հետ՝ շահառուներին անհրաժեշտ աջակցությունը կազմակերպելու նպատակով (օրինակ բնակարանի գազաֆիկացում, հրատապ դրամական աջակցություն):
Սոցիալական աշխատողների կողմից թվով 25 շահառուների համար կազմակերպվել է նաև տարբեր կառույցներից օգտվելիս իրավունքների իրացման երաշխիքների մասին խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ միջամտություն, միջնորդում, ուղղորդում:
Հոգեբանական աջակցությունը ներառել է միջանձնային կոնֆլիկտների հաղթահարման (հարևանների, հարազատների հետ կոնֆլիկտներ) մեխանիզմների քննարկում, ուշադրությունը, հիշողությունը խթանող վարժությունների իրականացում: Հոգեբանի կողմից շարունակական հոգեբանական աշխատանք է իրականացվել 11 շահառուի հետ:
Հաշվետու ժամանակահատվածում, հոգեբույժը այցեր է կատարել, շահառուների հոգեբուժական կարիքների գնահատում է իրականացրել, անհատական վերականգնողական պլաններում նշումներ է կատարել, տնայցերի միջոցով անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրել 8 շահառուի:
Տրամադրվող ծառայությունների միջոցով շահառուներից շատերը սկսել են ընդլայնել իրենց շփումների շրջանակը, վերականգնել իրենց ինքնավստահությունը, ավելի շատ ներգրավվել տնային մաքրության և ինքնախնամքի կազմակերպման գործընթացում, տեղեկատվություն ձեռքբերել՝ տարբեր կառույցներից/կազմակերպություններից օգտվելու հնարավորությունից:
Շփումների շրջանակի ընդլայնման արդյունքում 9 շահառուներ պարբերաբար հաճախել են կազմակերպության ցերեկային կենտրոններ, մասնակցել խմբակներին, միջոցառումներին և էքսկուրսիաներին:
Հաշվետու ժամանակահատվածում իրականցվել են բազմամասնագիտական թիմի քննարկումներ/հանդիպումներ, որի ընթացքում քննարկվել են անհատական դեպքերը, ընթացիկ հիմնախնդիրների հաղթահարման համալիր մոտեցումները:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում նյութեր չեն տեղադրվել:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- Կարիքների գնահատում,
- Շահառուի սոցիալական վերականգնման անհատական ծրագրի կազմում,
- Կենցաղային սպասարկման ծառայությունների տրամադրում,
- Շահառուների սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանում և զարգացում,
- Կերակրի պատրաստման, կերակրման կամ բարեգործական ճաշարանի կերակրի տուն բերման ծառայությունների տրամադրում՝ ըստ ռեսուրսի,
- Շահառուին ուղեկցում անհրաժեշտ վայրեր, բժշկական հաստատություններ,
- Շահառուի անձնական հիգիենայի պահպանման հետ կապված ծառայությունների տրամադրում,
- Աշխատանքային թերապիայի, արտթերապիայի կազմակերպում,
- Անհատական հոգեբանական օգնության տրամադրում,
- Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում շահառուին,
- Սոցիալ-հոգեբանական խորհրդատվական օգնություն ցուցաբերում ընտանիքին,
- Հոգեբույժի պարբերական հսկողության և խորհրդատվության տրամադրում,
- Շահառուի դեղերի ստացում և տրամադրում շահառուին՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղերի ճիշտ և ժամանակին ընդունման մշտադիտարկում,
- Բարդ դեպքերի քննարկում, հաջորդ ամսվա աշխատանքների պլանավորում,
- Փորձի փոխանակման հանդիպումների կազակերպում,
- Միջոցառումների իրականացում՝ ուղղված անձանց սոցիալական ներառմանը, համայնքայինկյանքին մասնակցությանը,
- Իրավաբանական աջակցության տրամադրում, իրավունքի ոտնահարման դեպքերի բացահայտում և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- Թիմային քննարկումներ,
- Դասընթացներ մասնագետների համար,
- Սուպերվիզիոն ծառայություն:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Հոգեբույժի և սուպերվիզորի մասնակցությամբ բոլոր համայնքներում իրականացվել են բարդ դեպքերի քննարկումներ:
- Ծրագրի շահառուներից շատերը մասնակցել են կազմակերպության կողմից նախաձեռնված միջոցառումներին, խմբակներին և էքսկուրսիաներին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 30 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 23 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 13 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 2 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 21 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 21 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը | Ա – 2<br>Բ - 43 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 46 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 46 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 46 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 3 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 25 |
| 7. | այլ ծառայություն (նշել) հոգեբանական խորհրդատվություն | 11 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)